Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145 - Ն որոշման

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԾԱԾԿԱԳՐԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Անվանումը	Ծածկագիրը	Սպասարկվող տարածքը
1	2	3
1. ՀՀ Արագածոտնի մարզպետարան		
Աշտարակի	016	քաղ. Աշտարակ և Աշտարակի նախկին վարչական շրջանի տարածքը
Ապարանի	049	Ապարանի նախկին վարչական շրջանի տարածքը
Ծաղկահովտի	050	Արագածի նախկին վարչական շրջանի տարածքը
Թալինի	094	Թալինի նախկին վարչական շրջանի տարածքը
2. ՀՀ Արարատի մարզպետարան		
Վեդու (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	051	Արարատի նախկին վարչական շրջանի տարածքը
Արտաշատի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	014	քաղ. Արտաշատ և Արտաշատի նախկին վարչական շրջանի տարածքը
Մասիսի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	077	Մասիսի նախկին վարչական շրջանի տարածքը
3. ՀՀ Արմավիրի մարզպետարան		
Արմավիրի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	031	քաղ. Արմավիր և Արմավիրի նախկին վարչական շրջանի տարածքը
Բաղրամյանի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	057	Բաղրամյանի նախկին վարչական շրջանի տարածքը
Վաղարշապատի	038	քաղ. Վաղարշապատ և Էջմիածնի նախկին վարչական շրջանի տարածքը
4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան		
Գավառի	025	քաղ. Գավառ և Կամոյի նախկին վարչական շրջանի տարածքը
Սևանի	035	քաղ. Սևան և Սևանի նախկին վարչական շրջանի տարածքը
Ճամբարակի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	074	Կրասնոսելսկի նախկին վարչական շրջանի տարածքը
Մարտունու	076	Մարտունու նախկին վարչական շրջանի տարածքը
Վարդենիսի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	058	Վարդենիսի նախկին վարչական շրջանի տարածքը

1	2	3
5. ՀՀ Լոռու մարզպետարան		
Թումանյանի	012	քաղ. Ալավերդի և Թումանյանի նախկին վարչական շրջանի տարածքը
Սպիտակի	036	քաղ. Սպիտակ և Սպիտակի նախկին վարչական շրջանի տարածքը
Ստեփանավանի	037	քաղ. Ստեփանավան և Ստեփանավանի նախկին վարչական շրջանի տարածքը
Տաշիրի	069	Տաշիրի նախկին վարչական շրջանի տարածքը
6. ՀՀ Կոտայքի մարզպետարան		
Աբովյանի	011	քաղ. Աբովյան և Աբովյանի նախկին վարչական շրջանի տարածքը
Հրազդանի	033	քաղ. Հրազդան և Հրազդանի նախկին վարչական շրջանի տարածքը՝ բացառությամբ Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս և Ֆանտան գյուղերի
Չարենցավանի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	039	քաղ. Չարենցավան և Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս ու Ֆանտան գյուղեր
Եղվարդի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	080	Նաիրիի նախկին վարչական շրջանի տարածքը
7. ՀՀ Շիրակի մարզպետարան		
Ախուրյանի	055	Ախուրյանի նախկին վարչական շրջանի տարածքը
Ամասիայի	046	Ամասիայի նախկին վարչական շրջանի տարածքը
Աշոցքի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	063	Աշոցքի նախկին վարչական շրջանի տարածքը
Արթիկի	015	քաղ. Արթիկ և Արթիկի նախկին վարչական շրջանի տարածքը
Մարալիկի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	048	Անիի նախկին վարչական շրջանի տարածքը
8. ՀՀ Սյունիքի մարզպետարան		
Գորիսի	018	քաղ. Գորիս և Գորիսի նախկին վարչական շրջանի տարածքը
Կապանի	027	քաղ. Կապան և Կապանի նախկին վարչական շրջանի տարածքը
Մեղրիի	079	Մեղրիի նախկին վարչական շրջանի տարածքը
Սիսիանի	088	Սիսիանի նախկին վարչական շրջանի տարածքը
9. ՀՀ Վայոց ձորի մարզպետարան		
Եղեգնաձորի	065	Եղեգնաձորի նախկին վարչական շրջանի տարածքը
Վայքի	044	Վայքի նախկին վարչական շրջանի տարածքը
10. ՀՀ Տավուշի մարզպետարան		
Իջևանի	067	Իջևանի նախկին վարչական շրջանի տարածքը
Նոյեմբերյանի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	081	Նոյեմբերյանի նախկին վարչական շրջանի տարածքը
Բերդի	097	Տաուշի նախկին վարչական շրջանի տարածքը

1	2	3
Դիլիջանի	021	քաղ. Դիլիջան, Թեղուտ, Հաղարծին, Գոշ գյուղեր
11. Երևան քաղաք		
Կենտրոնի	106	Կենտրոնի վարչական շրջանի տարածքը
Շենգավիթի	111	Շենգավիթի վարչական շրջանի տարածքը
Մալաթիա-Սեբաստիայի	107	Մալաթիա-Սեբաստիայի վարչական շրջանի տարածքը
Աջափնյակի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	101	Աջափնյակի վարչական շրջանի տարածքը
Դավթաշենի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	104	Դավթաշենի վարչական շրջանի տարածքը
Արաբկիրի	103	Արաբկիրի վարչական շրջանի տարածքը
Ավանի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	102	Ավանի վարչական շրջանի տարածքը
Նոր Նորքի	108	Նոր Նորքի վարչական շրջանի տարածքը
Քանաքեռ-Զեյթունի	112	Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանի տարածքը
Նորք-Մարաշի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	109	Նորք-Մարաշի վարչական շրջանի տարածքը
Նուբարաշենի (տեղակայված՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում)	110	Նուբարաշենի վարչական շրջանի տարածքը
Էրեբունու	105	Էրեբունու վարչական շրջանի տարածքը
12. ՀՀ Արարատի մարզ		
Արարատի	013	քաղ. Արարատ
13. ՀՀ Շիրակի մարզ		
Գյումրի-1	268	Գյումրու նախկին Շիրակի շրջանի վարչական տարածքը
Գյումրի-2	269	Գյումրու նախկին Մոսկովյան շրջանի վարչական տարածքը
14. ՀՀ Լոռու մարզ		
Վանաձորի	026	քաղ. Վանաձոր և Գուգարքի նախկին վարչական շրջանի տարածքը
15. ՀՀ Վայոց ձորի մարզ		
Ջերմուկի	020	քաղ. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման համար օգտագործվող բնութագրիչների՝ յուրաքանչյուրին համապատասխանող թվային արժեքների, գործակիցների մեծությունների, ընտանիքների անապահովության գնահատման բանաձևի հետ կապված հարաբերությունները:

2. Ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ օգտագործվում են հետևյալ բնութագրիչները՝

1) ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը.

2) ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը.

3) բնակավայրը.

4) ընտանիքի բնակարանային պայմանները.

5) անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունը և տեխնիկական զննում անցնելու հանգամանքը.

6) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.

7) անշարժ գույքի հետ կապված գործարքներ կատարելը.

8) ապրանքների ներմուծման և արտահանման համար ընտանիքի անդամներից մեկի կողմից մաքսային վճարների կատարումը.

9) ամառային ամիսների ընթացքում ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի քանակը.

10) ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տարածքային կենտրոնի, ինչպես նաև համապատասխան սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ արված եզրակացությունը.

11) ընտանիքի եկամուտը:

3. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, դրա ծածկագիրը, թվային արժեքը՝

Սոցիալական խմբի անվանումը	Ծածկագիրը	Անապահովության միավորը (Pi)
1) հաշմանդամության I խումբ ունեցող անձ	Հ11	48
2) հաշմանդամության II խումբ ունեցող անձ	Հ22	39
3) հաշմանդամության III խումբ ունեցող անձ	Հ33	28
4) հաշմանդամություն ունեցող երեխա	Հ44	45
5) երեխա՝ մինչև 5 տարեկանը լրանալը	Ա55	35
6) երեխա՝ 5 տարեկանից մինչև 18 տարեկանը լրանալը	Ա66	33
7) միակողմանի ծնողազուրկ երեխա	Մ23	43
8) առանց ծնողական խնամքի մնացած երեխա	Ե56	50
9) միայնակ մոր երեխա	Մ45	26
10) ամուսնալուծված անձի երեխա	Ա34	26
11) ուսանող՝ մինչև 23 տարեկան	Ս12	22
12) սովորող՝ 18 տարեկանից մինչև հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտելու տարվա հունիս ամիսը ներառյալ	Ս22	30
13) հղի կին (12 շաբաթական և ավելի ժամկետով)	Հ00	35
14) գործազուրկ	Գ99	22
15) աշխատանքի շուկայում անմրցունակ անձ	Գ98	28
16) կենսաթոշակառու	Կ88	36
17) միայնակ չաշխատող կենսաթոշակառու	Կ87	37
18) տարեց կենսաթոշակառու (75 տարեկան և բարձր)	Կ86	39
19) ընտանիքի «բացակա» կամ որևէ սոցիալական խումբ չունեցող անդամ		18

4. Ընտանիքի անապահովության միավորը որոշելիս՝ ընտանիքի «հարգելի բացակա» անդամն ընտանիքի անդամ չի դիտարկվում:

5. Միաժամանակ մի քանի սոցիալական խմբերի պատկանելու դեպքում ընտանիքի անդամի անապահովության միավորը հաշվարկվում է յուրաքանչյուր սոցիալական խմբի անապահովության միավորների գումարման միջոցով՝ օգտագործելով ճշգրտման գործակիցներ: Այս դեպքում սոցիալական տարբեր խմբերի անապահովության միավորները դիտարկվում են նվազող հաջորդականությամբ՝ առաջին միավորը վերցվում է ամբողջությամբ, երկրորդը՝ 0,3, իսկ երրորդը և չորրորդը՝ 0,1՝ ճշգրտման գործակիցներով:

6. Միակողմանի ծնողազուրկ երեխայի, առանց ծնողական խնամքի մնացած երեխայի, ամուսնալուծված ընտանիքի երեխայի, միայնակ մոր երեխայի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի սոցիալական խմբերի դեպքերում, որպես 2-րդ սոցիալական խումբ, հաշվի է առնվում նրանց՝ անչափահաս երեխա լինելու հանգամանքը՝ իրենց ժամկետներով:

7. Ընտանիքի անապահովության միջին միավորը (Pմիջ.) որոշելու համար ընտանիքի բոլոր անդամների անապահովության միավորների գումարը բաժանվում է ընտանիքի սոցիալական անձնագրում հաշվառված (բացառությամբ «հարգելի բացակա» անդամի) անձանց թվի վրա՝

Pմիջ. = (1/n) x (P1 + P2 +.....+ Pn),

որտեղ n-ն ընտանիքի սոցիալական անձնագրում հաշվառված (բացառությամբ «հարգելի» ճանաչված «բացակա» անդամի) անձանց թիվն է:

8. Ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը՝

1) ընտանիքի անաշխատունակ անդամների թիվն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում Kընտ գործակցով՝

$K_{ընտ}$ = 1,00 + 0,02 m,

որտեղ m-ն ընտանիքի անաշխատունակ անդամների թիվն է.

2) ընտանիքի անաշխատունակ անդամներն են երեխաները կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ կամ տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող չաշխատող անձինք:

9. Ընտանիքի «բացակա» անդամի՝ անապահովության գնահատման տեղեկատվական բազայում ծնողյան ամսաթվի առկայության դեպքում, $K_{ընտ}$ գործակիցը հաշվելիս, անաշխատունակ լինելը հաշվի է առնվում իր տարիքին համապատասխան: Ծնողյան ամսաթվի բացակայության դեպքում նա դիտարկվում է որպես ընտանիքի չափահաս աշխատունակ անդամ (18-63 տարեկան):

10. Բնակավայրը ընտանիքի անապահովությունը գնահատելիս, հաշվի է առնվում $K_{տ}$ գործակցով: Բնակավայրերի ցանկը, ըստ $K_{տ}$ գործակցի արժեքների, նշված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածում:

11. Ընտանիքի անապահովության գնահատման միավորի վրա ընտանիքի բնակարանային պայմանների ազդեցությունը որոշվում է $K_{բն}$ գործակցով՝

Բնակարանային պայմանները	$K_{բն}$	Ծածկագիրը
1) աղետի հետևանքով տրամադրված տնակ	1,2	04
2) ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն, տնակ	1,06	05
3) վթարային (3-րդ կամ 4-րդ աստիճանի) բնակարան	1,05	03
4) հանրակացարանի չսեփականաշնորհված սենյակ (բնակարան)	1,03	02

5) այլ պայմաններ (վարձակալությամբ կամ առանց դրա ընտանիքին չպատկանող բնակելի տարածություն, հյուրանոց, առողջարան, հիվանդանոց, զբոսաշրջության հանգրվան, մանկապարտեզ, դպրոց, նկուղ, ավտոտնակ, որոշակի բնակության վայր չունենալը և այլն) 1,02 06 և 07

6) սեփական առանձնատուն 1,00 01

7) բնակարան բազմաբնակարան շենքում 1,00 00:

12. Անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունը և տեխնիկական զննում անցնելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն են գործում $K_{ավ}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{ավ}$-ն հավասարվում է 1.0-ի:

13. Ընտանիքի որևէ անդամի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում $K_{ձ}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{ձ}$-ն հավասարվում է 1.0-ի:

14. Ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում $K_{ագ}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{ագ}$-ն հավասարվում է 1.0-ի:

15. Ապրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային վճարներ կատարելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդում է $K_{մաքս}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{մաքս}$-ը հավասարվում է 1.0-ի:

16. Ամառային ամիսների ընթացքում ընտանիքի կողմից էլեկտրաէներգիայի սպառման հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդում է $K_{է}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք, եթե ամառային ամիսների ընթացքում ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի քանակը գերազանցում է միջին ամսական սահմանային չափաքանակները, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

1) w = 1,3 x (80 կՎտ.ժամ + 40 կՎտ . ժամ x n), որտեղ n-ն ընտանիքի անդամների թիվն է.

2) նշված պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{է}$-ն հավասարվում է 1.0-ի:

17. Ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տարածքային կենտրոնի եզրակացությունը բարեկեցիկ ճանաչված ընտանիքների համար կիրառվում է $K_{բ}$ գործակ-

ցով, որն ունի 0-ական արժեք, սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների համար $K_բ$-ն հավասարվում է 1.0-ի:

18. Ընտանիքի եկամուտն անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում $K_{եկ}$ գործակցի միջոցով, որի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$K_{եկ} = 1.2 - 0,028 \frac{\sum_{j=1}^{d} s_j}{nx\ 2000},$$

որտեղ՝

d-ն սոցիալական անձնագրի լրացման պահին տվյալ բնակության վայրում ընտանիքի հաշվառված և փաստացի բնակվող բոլոր անդամների թիվն է,

Sj-ն ընտանիքի j-րդ անդամի եկամուտն է սոցիալական անձնագրի լրացման պահին (առանց ընտանեկան կամ սոցիալական նպաստի կամ հրատապ օգնության գումարի),

n-ն սոցիալական անձնագրի լրացման պահին տվյալ ընտանիքի անդամների թիվն է՝ առանց «հարգելի» հաշվառված բացակա անդամի:

19. Ընտանիքի անապահովության գնահատման բանաձևը սույն կարգի 7-18-րդ կետերում նշված ցուցանիշների թվային արժեքների և գործակիցների արտադրյալն է՝

$$P = P_{միջ} \times K_{ընտ} \times K_{տ} \times K_{բն} \times K_{ավ} \times K_{ձ} \times K_{ագ} \times K_{է} \times K_{եկ} \times K_{մաքս} \times K_{բ},$$

որտեղ P-ն ընտանիքի անապահովությունը գնահատող միավորն է:

20. Ընտանիքի անապահովության գնահատման բանաձևի օգնությամբ հաշվարկվում է յուրաքանչյուր ընտանիքի անապահովության միավորը՝ մեկ հարյուրերորդականի ճշտությամբ: Ընդ որում, որքան բարձր է այդ միավորը, այնքան տվյալ ընտանիքը համարվում է անապահով:

21. Եթե միայնակ չաշխատող կենսաթոշակառու (Կ87) ունեցող ընտանիքի անապահովության միավորն անապահովության 0 միավորից բարձր է և ցածր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանիքի անապահովության սահմանային միավորից կամ հավասար դրան, ապա այդ ընտանիքի անապահովության միավորը հավասարվում է սահմանային միավորից մեկ հարյուրերորդական բարձր միավորի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ (ՓԱՍՏԱԳՐՎԵԼՈՒ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են իրեն անապահով համարող ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (այսուհետ՝ գնահատման համակարգ) հաշվառվելու (փաստագրվելու) հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում է հաշվառվելու (փաստագրվելու) համար անհրաժեշտ տվյալների և (կամ) փաստաթղթերի ցանկը:

2. Գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով իրեն անապահով համարող ընտանիքի չափահաս անդամներից մեկը (այսուհետ՝ դիմող) դիմում է իր բնակության վայրն սպասարկող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 1 հավելվածում ներառված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին (այսուհետ՝ տարածքային կենտրոն) ներկայացնելով դիմում-հայտարարագիր՝ համաձայն N 1 ձևի, և անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները):

3. Սույն կարգով սահմանված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանցում ներառված տվյալներն առկա են համապատասխան մարմինների (կազմակերպությունների) էլեկտրոնային տեղեկատվական բազաներում:

4. Դիմում-հայտարարագիրը՝ անհրաժեշտ փաստաթղթերով, հաշվառվում է դիմումների հաշվառման մատյանում՝ համաձայն N 2 ձևի:

5. Դիմողի ընտանիքի համար լրացվում է սոցիալական անձնագիր՝ երկու օրինակից՝ համաձայն N 3 ձևի, որի մեկ օրինակը մնում է տարածքային կենտրոնում, իսկ մյուսը տրամադրվում է դիմողին:

6. Սոցիալական անձնագիրը լրացվում է համաձայն N 4 ձևի: Սոցիալական անձնագրում լրացված տվյալները մուտքագրվում են գնահատման համակարգի տեղեկատվական բազա (այսուհետ՝ տեղեկատվական բազա):

II. ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

7. Ընտանիքի կազմը որոշվում է ընտանիքի չափահաս անդամներից մեկի կողմից (ընտանիքի մյուս չափահաս անդամների համաձայնությամբ) տրված հայտարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային ստորաբաժանման կողմից (այսուհետ՝ տեղական ռեգիստր) քաղաքացուն տրամադրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին տեղեկանքի կամ տարածքային կենտրոնի՝ առցանց հարցման հիման վրա տրամադրած տեղեկատվության հիման վրա: Տեղեկատվության մեջ նշվում է ընտանիքի բնակության վայրում (կացարանում)՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց, իսկ համապատասխան հանգամանքների առկայության դեպքում՝ ժամկետային զինվորական ծառայության մեջ կամ քրեակատարողական հիմնարկում կամ հետախուզման մեջ գտնվելու մասին:

8. Ընտանիքի՝ գտնվելու վայրում հաշվառված, բայց այդ վայրում փաստացի չբնակվող անդամը սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում հաշվառվում է որպես ընտանիքի «բացակա» նշված անդամ, եթե առկա է տարածքային կենտրոնի և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) ներկայացուցիչներից կազմված խմբի տնային այցելության մասին արձանագրությունը: «Բացակա» լրացված ընտանիքի անդամի համար սոցիալական անձնագրում ամրագրվում և տեղեկատվական բազայում մուտքագրվում է «հարգելի բացակա», եթե՝

1) ընտանիքի տվյալ անդամը՝ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ ընտանիքի անդամ չհամարվող անձ է.

2) տեղական ռեգիստրում՝ տվյալ բնակության վայրում հաշվառված ընտանիքի բոլոր անդամներն են նշված «բացակա», և սոցիալական անձնագիրը լրացվում է տվյալ բնակության վայրում փաստացի հիմունքներով հաշվառված և բնակվող ընտանիքի համար.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ գտնվում է հետախուզման մեջ.

4) ընտանիքի անդամներից մեկի նախկին ամուսինն է, և առկա է ամուսնության դադարման իրավական հիմքը.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է ընտանիքի անդամների խնամակալ կամ հոգաբարձու.

6) ընտանիքի բացակա անդամը 6 ամիս և ավելի ժամկետով Հայաստանի Հանրապետությունից բացակայում է և ներկայացնում է փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունից դուրս հաշվառված լինելու (բնակվելու) մասին:

9. Ընտանիքի կազմը և փաստացի բնակության հասցեն որոշվում են տարածքային կենտրոնի, տեղական ինքնակառավարման մարմնի և խորհրդի մեկական ներկայացուցիչներից կազմված խմբի տնային այցելությամբ, եթե՝

1) սույն կարգի 7-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ որպես դիմողի ընտանիքի բնակության հասցե նշված է երկրաշարժի հետևանքով քանդված շինության հասցեն.

2) դիմողը ներառված է պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրում՝ ոչ իր փաստացի բնակության վայրում.

3) ուսումնասիրության մասին արձանագրությունն ստորագրվում է տնային այցելությանը մասնակից բոլոր պաշտոնատար անձանց կողմից:

10. Միևնույն բնակության վայրում բնակվող յուրաքանչյուր ընտանիքի կամ դրանցից մեկի համար լրացվում է առանձին սոցիալական անձնագիր, եթե առկա են՝

1) բնակարանային մակերեսի բաժանման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը.

2) միևնույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) ընտանիքների առանձին տնտեսություն վարելու հանգամանքը (առանձին մուտքեր, առանձին ջրաչափեր, առանձին էլեկտրական հաշվիչներ կամ առանձին տնտեսություն վարելու նմանատիպ այլ հանգամանքներ), որը հաստատվել է խորհրդի առաջարկությամբ և տարածքային կենտրոնի կատարած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությամբ:

11. Սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված կարգով առանձին ընտանիք ճանաչված դիմողի սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում լրացվում են միայն դիմողի ընտանիքի անդամների տվյալները:

12. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խմբին համապատասխան ընտանիքի սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում լրացվում է դրա ծածկագիրը:

13. Սոցիալական խմբերի ծածկագրերը և դրանց ամրագրման համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերն են (փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանցում ամրագրված տվյալները ներառված են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաներում, և առկա է դրանք առցանց ինքնաշխատ եղանակով ստանալու հնարավորությունը)՝

Սոցիալական խմբի անվանումը	Ծածկագիրը
1) հաշմանդամության I խումբ ունեցող անձ	Հ11
2) հաշմանդամության II խումբ ունեցող անձ	Հ22
3) հաշմանդամության III խումբ ունեցող անձ	Հ33
4) հաշմանդամություն ունեցող երեխա	Հ44

պահանջվող փաստաթուղթը՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի տեղեկանքի լուսապատճենը և տեղեկանք կենսաթոշակ (հաշմանդամության նպաստ) նշանակող մարմնից.

5) երեխա՝ մինչև 5 տարեկանը լրանալը	Ա55
6) երեխա՝ 5 տարեկանից մինչև 18 տարեկանը լրանալը	Ա66

պահանջվող փաստաթուղթը՝ ծննդյան վկայականի լուսապատճենը (նույնականացման քարտ) կամ 16 տարեկանը լրացած անձանց համար՝ անձնագրի լուսապատճենը.

7) միակողմանի ծնողազուրկ երեխա	Մ23

պահանջվող փաստաթուղթը՝ ծնողի մահվան վկայականի պատճենը կամ մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի լուսապատճենը, ինչպես նաև կենսաթոշակի կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունքի դեպքում՝ տեղեկանք կենսաթոշակ (նպաստ) նշանակող մարմնից.

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխա	Ե56

պահանջվող փաստաթուղթը՝ ծնողների կամ միակ ծնողի մահվան վկայականի պատճենը կամ մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի լուսապատճենը, ինչպես նաև տեղեկանք խնամակալության և հոգաբարձության մարմնից որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառելու մասին, կենսաթոշակի կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունքի դեպքում՝ տեղեկանք կենսաթոշակ (նպաստ) նշանա-

կող մարմնից.

9) միայնակ մոր երեխա Մ45

պահանջվող փաստաթուղթը՝ ծննդյան վկայականի, որում հոր տվյալներին վերաբերող տողում չկա որևէ գրանցում, լուսապատճենը, մնացած դեպքերում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնից տեղեկանք այն մասին, որ հոր մասին տվյալները լրացված են մոր ցուցումով, իսկ Հայաստանի Հանրապետությունից դուրս ծնված՝ Հայաստանում բնակվող երեխաների համար՝ այդ պետություններում սահմանված կարգով տրված համապատասխան տեղեկանքներ.

10) ամուսնալուծված անձի երեխա Ա34

պահանջվող փաստաթուղթը՝ երեխայի ծնողների ամուսնալուծության վկայականի կամ ամուսնալուծության մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի (2005 թվականի մայիսի 1-ից հետո կայացված), երեխայի հայրության որոշման վկայականի, եթե երեխայի ծնողները բնակվում են առանձին, կամ երեխայի ծնողներից մեկին անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի լուսապատճենները.

11) ուսանող՝ մինչև 23 տարեկան Ս12

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու մասին.

12) սովորող՝ 18 տարեկանից մինչև հանրակրթական

ուսումնական հաստատությունն ավարտելը Ս22

պահանջվող փաստաթուղթը՝ անձնագիր և դրա լուսապատճենը կամ նույնականացման քարտ, տեղեկանք հանրակրթական ուսումնական հաստատությունից.

13) հղի կին (12 շաբաթական և ավելի ժամկետով) Հ00

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք համապատասխան բուժհաստատությունից.

14) գործազուրկ Գ99

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք (տվյալ) զբաղվածության տարածքային կենտրոնից.

15) աշխատանքի շուկայում անմրցունակ անձ Գ98

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք (տվյալ) զբաղվածության տարածքային կենտրոնից.

16) կենսաթոշակառու Կ88

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք կենսաթոշակ (ծերության նպաստ) նշանակող իրավասու մարմնից.

17) միայնակ չաշխատող կենսաթոշակառու Կ87

պահանջվող փաստաթուղթը՝ դիմում-հայտարարություն.

18) տարեց կենսաթոշակառու (75 տարեկան և բարձր) Կ86

19) պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմում գտնվող անձ Ծ21

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք զինկոմիսարիատից:

14. Սոցիալական խմբերի ամրագրման առանձնահատկություններն են՝

1) կենսաթոշակառու է համարվում կենսաթոշակի կամ ծերության նպաստի իրավունք ունեցող անձը.

2) միայնակ մոր երեխա է համարվում այն երեխան, որի մայրը ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, կամ որը որդեգրվել է ամուսնության մեջ չգտնվող կնոջ կողմից, ընդ որում, միայնակ մոր երեխայի ծածկագիրը չի կիրառվում, եթե միայնակ կնոջ խնամքի տակ գտնվող մեկից ավելի երեխաների հայրանունը (բացառությամբ երկվորյակ կամ ավելի ծնված բոլոր երեխաների հայրանունից) նույնն է.

3) միակողմանի ծնողազուրկ երեխա է համարվում համապատասխան փաստաթղթերը ներկայացրած՝ 21 տարեկանը չլրացած չաշխատող անձը կամ մինչև 23 տարեկանը չլրացած չաշխատող անձը, եթե սովորում է ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսուցմամբ, բայց ոչ ավելի, քան մինչև այն ավարտելը.

4) առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում համապատասխան փաստաթղթերը ներկայացրած՝ 23 տարեկանը չլրացած անձը.

5) կենսաթոշակային տարիքը լրացած և հաշմանդամություն ունեցող անձանց համար «կենսաթոշակառու» և «տարեց կենսաթոշակառու» սոցիալական խմբերը որպես 2-րդ սոցիալական խումբ չեն ամրագրվում.

6) կենսաթոշակային տարիքը չլրացած և հաշմանդամություն ունեցող անձանց համար «գործազուրկ» և «աշխատանքի շուկայում անմրցունակ անձ» սոցիալական խմբերը որպես 2-րդ սոցիալական խումբ չեն ամրագրվում.

7) միայնակ չաշխատող կենսաթոշակառու է համարվում այն չաշխատող կենսաթոշակառուն կամ ծերության կամ հաշմանդամության նպաստ ստացող անձը, որը չունի չափահաս՝ կենսաթոշակի կամ հաշմանդամության նպաստի իրավունք չունեցող զավակներ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ խնամողներ և դրա մասին տվյալ անձը (անձինք) տալիս է (են) դիմում-հայտարարություն՝ համաձայն N 5 ձևի.

8) «Կ 87» ծածկագիրը չի ամրագրվում, եթե՝

ա. տվյալ կենսաթոշակառուն (կենսաթոշակառուները) ունի (ունեն) 18 տարեկանը լրացած և ավելի բարձր տարիքի, կենսաթոշակի իրավունք չունեցող առնվազն մեկ զավակ կամ ծնող (ծնողներ)՝ անկախ նրա (նրանց) բնակության վայրից,

բ. տվյալ կենսաթոշակառուի (կենսաթոշակառուների) հետ սոցիալական անձնագրում հաշվառված է 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի՝ կենսաթոշակի իրավունք չունեցող անձ (անձինք)՝ բացառությամբ այն դեպքի, եթե այդ անձի (անձանց) համար սոցիալական անձնագրում ամրագրված և տեղեկատվական բազայում մուտքագրված է «հարգելի բացակա» տվյալը:

15. Ընտանիքում տեխնիկական զննում անցած անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայության հանգամանքն ամրագրվում է «02» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

16. Ընտանիքի որևէ անդամի՝

1) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքն ամրագրվում է «03» ծածկագրով.

2) սահմանափակ պատասխանատվության ընկերության կամ լիակատար տնտեսական ընկերակցության կամ փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր (մասնակից) լինելու հանգամանքն ամրագրվում է «07» ծածկագրով.

3) վստահության վրա հիմնված՝ ընկերության բաժնետեր լինելու հանգամանքն ամրագրվում է «08» ծածկագրով.

4) սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված հանգամանքները չեն ամրագրվում, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

17. Ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու հանգամանքն ամրագրվում է «Կ» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

18. Ընտանիքի անդամներից մեկի կողմից ապրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային մուծումներ կատարելու հանգամանքն ամրագրվում է «06»

ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

19. Ընտանիքի կողմից ամառային ամիսների ընթացքում էլեկտրաէներգիայի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու հանգամանքն ամրագրվում է «05» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

20. Սույն կարգի 15-19-րդ կետերով սահմանված կարգով խորհրդի ներկայացրած առաջարկությունը և տարածքային կենտրոնի՝ համապատասխան տեղեկատվությունը չամրագրելու մասին որոշումը գործում են՝

1) սույն կարգի 15-16-րդ կետերով սահմանված տեղեկատվությունների դեպքում՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով.

2) սույն կարգի 17-19-րդ կետերով սահմանված տեղեկատվությունների դեպքում՝ մինչև հաջորդ տեղեկատվությունն ստանալու ամիսը.

3) սույն կետով սահմանված ժամկետը լրանալու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում համապատասխան տեղեկատվության ամրագրման հարցը կրկին քննարկվում է սահմանված կարգով:

21. Ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տարածքային կենտրոնի եզրակացությունն ամրագրվում է՝

1) ընտանիքին սոցիալապես անապահով ճանաչելու դեպքում՝ «այո» ծածկագրով.

2) ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու դեպքում՝ «ոչ» ծածկագրով:

22. Ընտանիքի բնակարանային պայմանների ծածկագրերն են և դրանց ամրագրման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝

Բնակարանային պայմանները	Ծածկագիրը
1) աղետի հետևանքով տրամադրված տնակ	04
պահանջվող փաստաթուղթը՝ տեղական ինքնակառավարման մարմնի տեղեկանք.	
2) ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն, տնակ	05
պահանջվող փաստաթուղթը՝ տեղական ինքնակառավարման մարմնի տեղեկանք.	
3) վթարայնության 3-րդ կամ 4-րդ աստիճան ունեցող բնակարան	03

պահանջվող փաստաթուղթը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության լիազորած մասնագիտացված կազմակերպության կամ այդ կազմակեր-

պությունից ստացված համապատասխան եզրակացության հիմքով, տվյալ եզրակացությունը տալու օրվանից հետո տվյալ շինության ամրացման աշխատանքներ իրականացված չլինելու դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմնի տված տեղեկանքը.

4) հանրակացարանի չսեփականաշնորհված սենյակ (բնակարան) 02

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք հանրակացարանի ղեկավար կառավարման մարմնից.

5) այլ պայմաններ (վարձակալությամբ կամ առանց դրա ընտանիքին չպատկանող բնակելի տարածություն, հյուրանոց, առողջարան, հիվանդանոց, զբոսաշրջության հանգրվան, մանկապարտեզ, դպրոց, նկուղ, ավտոտնակ և այլն) 06

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմնից կամ հյուրանոցի, առողջարանի, հիվանդանոցի, զբոսաշրջության հանգրվանի, մանկապարտեզի, դպրոցի կառավարման ղեկավար մարմնից.

6) որոշակի բնակության վայր չունենալը 07

հայտարարությամբ և տարածքային կենտրոնի կողմից կատարված տեղազննության արդյունքում (ահազանգման արդյունքում):

23. Ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ մտնում են՝

1) ընտանիքի անդամների աշխատանքի վարձատրությանն ուղղված՝ հաշվարկված՝ վճարման ենթակա միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 8-ի «Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին» N 853-Ն որոշմամբ սահմանված՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկի.

2) կենսաթոշակը.

3) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստները.

4) «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին հոդվածով սահմանված զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, առանձին կատեգորիաների անձանց ընտանիքների անդամների ամենամսյա պարգևավճարները (այսուհետ՝ պարգևավճար).

5) անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտը:

24. Աշխատավարձի չափը հաշվի է առնվում դիմելու պահին նախորդած 3 ամսվա միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատավարձի չափի մասին տվյալը դիմողի կողմից ներկայացվում է յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա ընթացքում, եթե այդ ամիսը չի հաջորդում տվյալ ընտանիքի փաստագրման ամսվան:

25. Եթե դիմողը մինչև դիմելու ամիսն աշխատել է երեք ամսվանից քիչ, ապա աշխատավարձի չափը հաշվի է առնվում դիմելու ամսվան նախորդող ամսվա աշխատավարձի չափով, իսկ դիմողի՝ աշխատանքից ազատվելու դեպքում աշխատավարձի չափի մասին տվյալը հանվում է տեղեկատվական բազայից՝ դրա մասին համապատասխան փաստաթուղթը ներկայացվելուց անմիջապես հետո՝ մեկօրյա ժամկետում:

26. Աշխատավարձի, ինչպես նաև աշխատանքի վարձատրությանն ուղղված այլ միջոցների չափերն ստուգվում են պետական կենսաթոշակային համակարգի անձնավորված տվյալների շտեմարանում:

27. Կենսաթոշակի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների չափերը, որպես եկամուտ, հաշվի են առնվում դիմելու ամսվան նախորդող ամսվա չափով:

28. Եթե ընտանիքն ստանում է կերակրողին կորցնելու դեպքում տրվող կենսաթոշակ կամ նպաստ, ապա կենսաթոշակի կամ նպաստի չափն ամրագրվում է «Մ 23» կամ «Ե 56» ծածկագիրն ունեցող անձանց վերաբերող տողերում՝ համամասնորեն:

29. Անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտը հաշվարկվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 5 հավելվածի:

30. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կենսաթոշակի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների չափերը փոփոխվում են գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազայում, դրանց բարձրացման ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

31. Ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ չեն մտնում «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված իրավունքների իրականացման շրջանակներում վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները:

III. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄՈՒՄԸ

32. Տարածքային կենտրոնը դիմում-հայտարարագիրը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առցանց հարցում է կատարում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական բազա՝ ընտանիքին (ըստ ընտանիքի անդամների) պատկանող (ամբողջ հանրապետությունում) հողամասի հողատեսքի, դրա կադաստրային զուտ եկամտի և հողատարածքի մակերեսի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: Առցանց հարցման օրը համարվում է ընտանիքին (ըստ ընտանիքի անդամների) պատկանող (ամբողջ հանրապետությունում) գյուղատնտեսական նշանակության հողամասի հողատեսքի, դրա կադաստրային զուտ եկամտի և հողատարածքի մակերեսի մասին տեղեկանքը ներկայացնելու օր.

2) բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազա՝ դիմողի անունով՝ ընտանիքի բնակության վայրում (կացարանում)՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց մասին, իսկ համապատասխան հանգամանքների առկայության դեպքում՝ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ քրեակատարողական հիմնարկում գտնվելու մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: Առցանց հարցման օրը համարվում է անհրաժեշտ տվյալը ներկայացնելու օր:

33. Տարածքային կենտրոնը, ըստ անհրաժեշտության, համապատասխան տեղեկատվական շտեմարաններից ինքնաշխատ եղանակով (դիմելու պահին) կամ դիմողի կողմից ներկայացված տեղեկանքի հիման վրա ստանում է դիմողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասին ստորև թվարկվող տվյալները՝

1) աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների չափը.

2) կենսաթոշակի տեսակը և չափը.

3) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների չափերը և ժամկետները.

4) հաշմանադմության խումբը և ժամկետը.

5) գործազուրկի կամ անմրցունակ գործազուրկ լինելու հանգամանքը և դրանց ժամկետները.

6) առանց ծնողական խնամքի մնացած լինելու հանգամանքը:

34. Տարածքային կենտրոնն ստանում է համապատասխան տեղեկատվական շտեմարաններից ինքնաշխատ եղանակով կամ գնահատման համակարգի տեղակատվական բազան սպասարկող կազմակերպությունից՝ համադրման

արդյունքներով ստացված, դիմողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասին ստորև թվարկվող տվյալները՝

1) ընտանիքի որևէ անդամի՝

ա. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին,

բ. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ լիակատար տնտեսական ընկերակցության կամ փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր (մասնակից) լինելու մասին,

գ. վստահության վրա հիմնված ընկերության բաժնետեր լինելու մասին,

դ. անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու մասին,

ե. ապրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային մուծումներ կատարելու մասին.

2) ընտանիքի կողմից ամառային ամիսների ընթացքում էլեկտրաէներգիայի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու մասին:

35. Տարածքային կենտրոնի աշխատողը ներկայացված փաստաթղթերը համեմատում է դիմում-հայտարարագրում նշված փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև բնօրինակների հետ, լուսապատճենների վրա կատարում է «Իսկականի հետ ճիշտ է» գրառումը և ստորագրում է, դիմում-հայտարարագրի վրա նշում է ստացման ամսաթիվը, ստորագրում և ընդունում է՝ դիմողին վերադարձնելով դիմում-հայտարարագրի՝ պատճենահանող թղթով պատճենահանվող օրինակը:

36. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի դեպքում ներկայացված փաստաթղթերը տեսաներածվում են, և լուսապատճեններ չեն պահանջվում:

37. Տարածքային կենտրոնի աշխատողները ներկայացված փաստաթղթերում չեն կարող ուղղում կատարել՝ բացառությամբ ակնհայտ սխալների ու վրիպակների:

38. Եթե դիմում-հայտարարագրի հետ միասին չեն ներկայացվում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա տարածքային կենտրոնի աշխատողը դիմում-հայտարարագրում կատարում է համապատասխան նշումներ և դիմում-հայտարարագրի՝ պատճենահանող թղթով պատճենահանվող օրինակը 3 օրվա ընթացքում վերադարձնում է դիմողին՝ տեղեկացնելով պակասող փաստաթղթերի և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության մասին:

39. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի դեպքում դիմողը գրավոր ծանուցվում է

պակասող փաստաթղթերի և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության մասին:

40. Տարածքային կենտրոնի աշխատողը, դիմում-հայտարարագիրն ընդունելիս, դիմողին ծանոթացնում է՝

1) սոցիալական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև ընտանիքների անապահովության միավորի հիման վրա նշանակվող պետական նպաստների նշանակման ու վճարման կարգերին.

2) դիմողի հետ ճշտում է ընտանիքի փաստացի կազմի ու տեղական ռեգիստրում հաշվառված անձանց, դիմում-հայտարարագրում ներառված և սույն կարգի 32-րդ և 33-րդ կետերով նախատեսված տվյալների համապատասխանությունը.

3) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով անհամապատասխանության հայտնաբերման դեպքում դիմողին ուղղորդում է համապատասխան պետական մարմին (կազմակերպություն)՝ նրան տրամադրելով խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի մասին:

41. Տարածքային կենտրոնի աշխատողը տեղեկատվական բազա է մուտքագրում ներկայացված փաստաթղթերում առկա (ինքնաշխատ եղանակով ստացված) տվյալները (այդ թվում՝ դիմում-հայտարարագրում լրացված ընտանիքի կազմի, ինչպես նաև հաշվարկված՝ ընտանիքի հողօգտագործումից ստացվող եկամտի մասին տվյալները)՝ մեկօրյա ժամկետում:

42. Տարածքային կենտրոնի աշխատողը տվյալ ընտանիքի համար կազմում է սոցիալական գործ՝ համաձայն N 6 ձևի, որը պահպանում է տարածքային կենտրոնը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

43. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի դեպքում սոցիալական գործը կազմվում է նաև էլեկտրոնային տարբերակով, որի մեջ տեսանելիացվում են դիմողի ներկայացրած բոլոր փաստաթղթերը:

44. Տարածքային կենտրոնի աշխատողը սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով ստացած տվյալները համեմատում է դիմողի դիմում-հայտարարագրում ներառված տվյալների հետ, անհամապատասխանության դեպքում դրանք մուտքագրում է տեղեկատվական բազա, իսկ տեղեկանքը եռօրյա ժամկետում

տպում և ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին՝ հաստատման, որը հաստատվելուց հետո տեղադրվում (տեսաներածվում) է սոցիալական գործի մեջ:

45. Տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը դիմում-հայտարարագրում լրացված և սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով ստացված տեղեկանքում առկա տվյալների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում դրա մասին գրավոր տեղեկացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին:

46. Տարածքային կենտրոնի աշխատողը սույն կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով ստացած տվյալները համեմատում է դիմողի դիմում-հայտարարագրում ներառված տվյալների հետ և եռօրյա ժամկետում՝

1) դրանց համապատասխանության դեպքում տեղեկանքը տպում և ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին՝ հաստատման, որը հաստատվելուց հետո տեղադրվում (տեսաներածվում) է սոցիալական գործի մեջ.

2) դրանց անհամապատասխանության դեպքում դիմողին ուղղորդում է տեղական ռեգիստր՝ նրան տրամադրելով խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման կարգի մասին: Տեղական ռեգիստրի տրամադրած տեղեկանքը համարվում է տրված սույն կարգի 32-րդ կետով սահմանված օրը, եթե այն տարածքային կենտրոն է ներկայացվել առցանց հարցման օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում:

47. Տարածքային կենտրոնի կողմից դիմումն ընդունվելու, ինչպես նաև սույն կարգի 34-րդ կետով սահմանված տվյալներն ստանալուց հետո դիմողի բնակության վայրն սպասարկող աշխատողը 15 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է տնային այցելություն՝ ուսումնասիրելու համար դիմողի ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, կազմում է արձանագրություն, եզրակացություն և ներկայացնում է առաջարկություն՝

1) ընտանիքին սոցիալապես անապահով և նպաստառության ենթակա ճանաչելու մասին.

2) ընտանիքին սոցիալապես անապահով և եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու հարցը խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին.

3) ընտանիքին սոցիալապես անապահով, սակայն նպաստառության ոչ ենթակա ճանաչելու մասին.

4) ընտանիքին սոցիալապես անապահով և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական ծառայություն տրամադրելու մասին.

5) ընտանիքի կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի կամ մի քանիսի համար սոցիալական դեպք բացելու մասին.

6) սույն կարգի 34-րդ կետով նախատեսված դեպքերում՝ խնդիրը խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին.

7) ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու մասին:

48. Սույն կարգի 47-րդ կետով սահմանված առաջարկությունը համապատասխան աշխատողը տնային այցելություն կատարելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին:

49. Տարածքային կենտրոնը սույն կարգի 34-րդ կետով սահմանված տվյալներն ստանալուց հետո՝ սույն կարգի 47-րդ կետով սահմանված կարգով տրված առաջարկությունների մասին ամփոփ տեղեկատվությունը մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)՝ համաձայն N 7 ձևի, կցելով բարեկեցիկ ճանաչված ընտանիքների ցուցակը:

50. Դիմողը փաստագրման նպատակով դիմելու (հաշվառման կամ նախորդ փաստագրման) ամսվան հաջորդող 12-րդ ամսվա ընթացքում տարածքային կենտրոն է ներկայացնում սույն կարգով նախատեսված փաստաթղթերը (տվյալները):

51. Եթե հաշվառվելուց կամ փաստագրվելուց հետո 12 ամսվա ընթացքում ընտանիքի կազմում, ընտանիքին, ընտանիքի որևէ անդամին վերաբերող տվյալներում կատարվել են փոփոխություններ, ապա դիմողը 30 օրվա ընթացքում ներկայացնում է դրանք հավաստող փաստաթղթերը:

52. Ընտանիքի բնակության վայրը փոխվելու դեպքում՝ դիմումի համաձայն դիմողին է տրամադրվում տվյալ ընտանիքի ստացած ընտանեկան կամ սոցիալական նպաստի կամ հրատապ օգնության մասին տեղեկանք՝ համաձայն N 8 ձևի:

53. Ընտանիքի բնակության վայրը փոխվելու մասին դիմումը և տրված տեղեկանքի պատճենը պահվում են սոցիալական գործում:

54. Նոր բնակության վայրում տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկանքի (N 8 ձև) հիման վրա նույն կազմով տեղափոխված ընտանիքի համար սոցիալական անձնագրի նույն համարով կազմում է նոր

սոցիալական գործ՝ պահանջելով գնահատման համակարգում հաշվառվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

55. Ընտանիքի մեկ անդամի (կամ մի քանի անդամի) տեղափոխման և նոր բնակության վայրի տարածքային կենտրոնում առանձին հաշվառման դեպքում նոր բնակության վայրի տարածքային կենտրոնում տրվում է սոցիալական անձնագիր՝ նոր համարով, կազմվում է սոցիալական նոր գործ՝ պահանջելով գնահատման համակարգում հաշվառվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

56. Ընտանիքը հաշվառումից դուրս է գալիս ընտանիքի չափահաս անդամներից մեկի դիմումի հիման վրա, որը պահվում է սոցիալական գործում և ձևակերպվում է գնահատման համակարգի տեղեկատվական բազայում՝ հետևյալ ծածկագրերով՝

1) «Ե»՝ ընտանիքը տեղափոխվում է այլ բնակավայր՝ նշելով այն տարածաշրջանի ծածկագիրը, ուր տեղափոխվում է ընտանիքը.

2) «Կ»՝ կրկնակի հաշվառված լինելու դեպքում.

3) «Մ»՝ միայնակ անձի մահվան դեպքում.

4) «Ի»՝ դիմել է ընտանիքը գնահատման համակարգի հաշվառումից դուրս բերելու համար:

57. Սոցիալական գործում պահպանվում են վերջին 5 տարվա ընթացքում դիմողի ներկայացրած բոլոր փաստաթղթերը, իսկ դրանից հետո դիմելիս՝ ներկայացրած փաստաթղթերի հիման վրա կազմվում է նոր սոցիալական գործ:

58. Սոցիալական նախորդ գործը պահպանվում է տարածքային կենտրոնում՝ 5 տարի ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ